ԱԳՌԱՎԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

ԱՐԱՔՍՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Համաշխարհային բանահյուսության և առասպելական մտածողության մեջ թռչունների կերպարները հանդես են գալիս իբրև այդ համակարգերի անբաժան ու անփոխարինելի միավորներ: Թռչնային կերպարների բազմազանությունն իր մեջ է ներառում ոչ միայն թռչունների՝ իրականում գոյություն ունեցող տեսակներ (ագռավ, արագիլ, արծիվ և այլն), այլև երևակայական թռչուններ (փյունիկ, Զմրուխտ դուշ, Հազարան հավք): Թռչունները բանահյուսության մեջ հանդես են գալիս և՛ որպես այս կամ այն երևույթի խորհրդանիշ (օրինակ՝ սոխակը՝ սիրո, կռունկը՝ պանդխտության և այլն), և՛ որպես կերպարանափոխված մարդիկ, և՛ մշակութային հերոսներ կամ տոտեմ-նախնիներ (արծիվը՝ որպես Արծրունյաց տան անվանադիր):

Շատ ազգերի բանահյուսության և դիցաբանության մեջ հատկապես նշանակալից է ագռավի դերը, և վերջինիս առասպելականացումը մեծ մասամբ պայմանավորվում է նրա կենսաբանական որոշ հատկանիշներով (սուր, ողբային կռինչ, սև գույն, գիշակերություն, անմաքուր կենսակերպ): «Ագռավ» բառի ստուգաբանությունը աշխարհի շատ լեզուներում առնչվում է նրա այդ հատկանիշներին: Օրինակ՝ չինական, արաբական լեզուներում բառը ստուգաբանվում է թռչնի սև գույնի հատկանիշով: Բայց առավել տարածված է «ագռավ» բառի բնաձայնական ստուգաբանությունը, որի համաձայն՝ հնդեվրոպական մի շարք լեզուներում թռչնի անունը ստուգաբանվում է նրա արձակած ձայնի՝ կռնչոցի հատկանիշով: Հնդեվրոպական նախալեզվում եղել է kor, qor բնաձայնական արմատը (կռկռալ), որից էլ կազմվել են այդ ընտանիքին պատկանող շատ լեզուների համապատասխան բառերը՝սանս. karava, *լատ. corvus, անգլ. crow: Այս նույն արմատն է ընկած նաև հայերեն «ագռաւ» բառի հիմքում: Հայերենի բարբառներում գործածվող կռիկ, կռկա, կռկոտ, դառռա ձևերը ևս հնդեվրոպական նույն նախարմատից են ծագել[1]:*

Մեր լեզվական մտածողության մեջ «ագռավ» բառն օգտագործվել է նաև իբրև սև գույնի խորհրդանիշ: Գր. Նարեկացու ստեղծագործության մեջ հանդիպում է «ագռաւանալ» բառը, որը հեղինակն օգտագործել է «սևանալ» իմաստով: Ժողովրդական հանելուկներում հաճախ է գործածվում «Սև է, ագռավ չէ» հակադրությունը: Սև գույնը ագռավի համար այնքան բնորոշ է ու նրանից անբաժան («Ագռավն ինչքան լողանա, դազ չի լինի»), որ սպիտակ ագռավը դիտվում է իբրև հազվագյուտ, բացառիկ կամ պարզապես իրականության մեջ գոյություն չունեցող երևույթ:

---

[1] *Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, էջ 79:*

Ագռավի սև գույնը շատ ժողովուրդների մեջ ընկալվել է իբրև կրակի կամ ծխի հետ շփվելու արդյունք, կամ որպես աստվածներից ստացած պատիժ: Ըստ Մելետինսկու՝ «Կրակի ծագման մասին բոլոր առասպելներում Ավստրալիայից մինչև Ամերիկա գլխավոր հերոսը որևէ կենդանի է (առավելապես թռչուն)»[2]: Իսկ Ա. Տյումենևը, խոսելով կրակի ծագման մասին առասպելների վերաբերյալ, նշել է. «Այս զրույցների մեծամասնության մեջ կրակի հափշտակումն ու նրան տիրանալը վերագրվում է կենդանիների կամ թռչունների այս կամ այն ներկայացուցչին: Նախնադարյան այսպիսի պրոմեթեոսների դերում հատկապես հաճախ հանդես են գալիս թռչունները՝ վառ կարմիր կամ ածխի նման սև թռչունները, որոնց սև ու մրկված փետուրները վկայում են նրանց կատարած հոյարարքի մասին: Այսպիսիններից է ամենից առաջ ագռավը. . . «[3]: Հենվելով ռուս գիտնականի այս դիտարկումների վրա՝ Թ. Ավդալբեգյանը համոզված է, որ ագռավը կրակապաշտների սրբազան թռչունն է եղել և կրակի խորհրդանիշը միհրապաշտ Հայաստանում[4]:

«Սասնա ծռերի» հերոս Մհեր-Միհրը փակված է «Ագռավու քար» կամ «Ակռփու քար» կոչված քարաժայռում, որ ժողովրդական ստուգաբանության համաձայն այդպես է կոչվում, որովհետև Մհերի նետից վիրավոր խոսող ագռավն է նրան այդտեղ առաջնորդել. «Ինչ ագռավ մտավ էնտեղ, էն դիմաց կասին Ագռավու քեար»[5]: Ագռավի և կրակապաշտության աղերսների մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ պատումներից մեկում փոքր Զատկի խթման գիշերը կրակի գնացած մի աղջիկ մտնում է Ագռավաքար և կրակ բերում: Որպես ապացույց իր տեսակետի՝ Ավդալբեգյանը օրինակներ է բերում նաև վրաց դիցաբանությունից: Վրաց էպոսի հերոս Ամիրանին փակված է Սա-Կորնե լեռան մոտ (Ագռավների լեռ): Նրան ուտելիք է բերում ագռավը[6]:

Մեր կարծիքով, ագռավի՝ կրակապաշտության հետ ունեցած աղերսների մասին խոսուն ապացույց է հետևյալ ասացվածքը. «Ագռավն արին գեղին քեհյա, մոխիր տվեց գեղին վրա»[7]: Ագռավն այստեղ ներկայացնում է իբրև ամեն ինչ կործանման ու հրի մատնող առաջնորդի խորհրդանիշ: Սակայն բացառված չէ, որ ասացվածքն իր մեջ պահպանած լինի հիշողությունը այն վաղնջական ժամանակներից, երբ ագռավն ընկալվել է իբրև կրակաբեր թռչուն:

Ոչ միայն իբրև կրակաբեր, այլև պարզապես իբրև թռչող արարած՝ երկնքի, վերևի հետ առնչվող, ագռավը հայկական մի շարք ավանդազրույցներում անձնազոհ բարերարի համարում է վաստակել, և իր այդ հատկանիշով ագռավի կերպարը նույնացվել է աղավնու կերպարի հետ:

Մեջբերենք այդպիսի զրույցներից մեկը. «Մի շոգ օր մշակները Լոռվա Հաղպատաձոր կոչված վայրում հունձ անելիս են լինում: Ճաշին նրանց համար

---

[2] Мифы народов мира. Т. 2 , М., 1967, с. 239.

[3] *Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 48:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Սասնա ծռեր. Հայ ժողովրդական վեպ, աշխատ. Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 506:*

[6] *Թ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն. նշվ. աշխ., էջ 49:*

[7] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Առածանի (այսուհետև՝ Առածանի), Երևան, 1960, էջ 223:*

թանե սպաս են բերում: Դեռ հացի չնստած՝ օձն ընկնում է սպասի մեջ: Մի ագռավ, նկատելով այդ, զանազան ձայներ հանելով, ուզում է մշակների ուշադրությունը հրավիրել օձի վրա: Տեսնելով, որ նրանք գլխի չեն ընկնում, ագռավն իրեն նետում է սպասի մեջ և խեղդվում... Ի նշան երախտագիտության՝ մշակներն ագռավին թաղում են մոտակա գերեզմանատանը և վրան տապան դնում, որ հայտնի է Ագռավի տապան անունով»[8]: Նույն բովանդակությամբ այլ զրույցներ են պատմվել Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Նինկի գյուղի մոտ գտնվող Ագռավի գերեզմանի[9], Եղվարդ գյուղի մոտ՝ Արայի լեռան լանջին գտնվող Ագռավավանքի[10], Տաթև գյուղի մերձակայքում գտնվող Ագռավախաչի մասին[11]: Ուշագրավ է, որ համանման բովանդակությամբ զրույցի մեկ այլ տարբերակ է պատմվում Լոռիում գտնվող Աղավնատուն կոչված մատուռի մասին[12]:

Ինչպես նշել է Ս. Հարությունյանը, այս զրույցներում աղավնին ու ագռավը՝ իբրև թռչուններ, կապված են վերևի, օդի, երկնքի հետ ու հակադրված են օձին՝ իբրև սողունի, երկրայինի, գետնայինի, և նրանք վերևից, երկնքից են իրենց գցում գետին՝ մատաղի կաթսան, ուր մտել էր օձը[13]:

Ագռավի և օձի հակադրության խոսուն օրինակ է Տաթևից Շնհեր տանող ճանապարհին գտնվող Ագռավի աղբյուրի ավանդությունը: Գր. Տաթևացին երեխա ժամանակ արածեցնելիս է եղել Տաթևի վանքի գառները: Մի օր աղբյուրից ջուր խմելիս օձն ուզում է խայթել նրան: Տեսնելով այդ՝ ագռավն իրեն նետում է աղբյուրի մեջ: Օձը Գրիգորի փոխարեն խայթում է ագռավին[14]:

Հատկանշական է, որ անտիկ առասպելաբանության մեջ ագռավը քթոնիկ բնույթ չունի: Հատկանշական է նաև, որ ագռավը մարդկության թշնամու դիվային հատկանիշներով հանդես է գալիս հիմնականում հայկական այն ավանդազրույցներում, որոնք առնչվում են Նոյի և Ադամի որդիների աստվածաշնչյան պատմություններին: Մնացած ավանդությունների մեծ մասում ագռավը հանդես է գալիս իբրև մարդկանց բարեկամ և օգնական ու եթե որևէ վնաս էլ հասցնում է մարդկանց, ապա միայն անգիտությամբ և ոչ դիտավորյալ[15]:

Ագռավի մասին հնագույն հիշատակությունը, ինչպես հայտնի է, Գիլգամեշի մասին բաբելոնյան էպոսում է: Այստեղ ագռավը կապվում է համաշխարհային ջրհեղեղի մասին առասպելի հետ: Ուտ-Նապիշտին նավից հերթականությամբ ուղարկում է ծիծեռնակին, աղավնուն և ագռավին՝ իմանալու համար, թե ցամաքը չի՞ ազատվել ջրից: Առաջին երկուսը հետ են դառնում՝ ցամաք չգտնելով,

---

[8] *Ս. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում (այսուհետև՝ Ավանդապատում), Երևան, 1969, էջ 269:*

[9] *Նույն տեղում, էջ 264:*

[10] *Նույն տեղում, էջ 224:*

[11] *Նույն տեղում, էջ 263:*

[12] *Նույն տեղում, էջ 241:*

[13] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 335:*

[14] *Ավանդապատում, էջ 97:*

[15] *Նույն տեղում, էջ 55:*

իսկ ագռավը չի վերադառնում, որովհետև, հավանաբար, ցամաք է գտնում և ուտում է խեղդվածների դիակները, ինչը վկայում է ջրհեղեղի ավարտը:

Ջրհեղեղի աստվածաշնչյան նկարագրության մեջ ագռավը հետ չի գալիս, հետ է գալիս նրանից հետո ուղարկված աղավնին՝ ձիթենու ճյուղը կտցին: Ագռավը և աղավնին, ի տարբերություն բաբելոնյան վարկածի, այստեղ հանդես են գալիս իբրև հակադիր բևեռներ, վատ և լավ լրաբերներ:

Ջրհեղեղյան մոտիվն ուսումնասիրած Ա. Ռութը գտնում է, որ նավից թռչուններ ուղարկելը հնուց ի վեր նավաստիների կողմից կիրառվող միջոց է, իսկ դրա աստվածաշնչյան տարբերակն արտահայտում է կենդանիներին «մաքուրների» և «անմաքուրների» բաժանելու հրեական ավանդույթը: Ագռավի և աղավնու այս հակադրությունն առավել սաստկանում է ուշ հրեական ու արաբական ավանդույթներում[16]: Միջնադարյան քրիստոնեական գաղափարախոսության մեջ ագռավը դառնում է դժոխքի և սատանայական ուժերի մարմնավորում, իսկ աղավնին՝ դրախտի, սուրբ հոգու, քրիստոնեական հավատի խորհրդանիշ: Այս մեկնությունը, ըստ Ռութի, հենվում է ոչ միայն հրեական ավանդույթի, այլև նախաքրիստոնեական առասպելական պատկերացումների վրա, որոնց հիմքում ագռավի կենսաբանական հատկանիշներն են:

Ջրհեղեղյան պատմությունն արտահայտող հայկական ավանդությունները կարելի է բաժանել 2 խմբի: I խմբի ավանդություններում ագռավը հանդես չի գալիս Աստծո հակառակորդի, չարագործի հատկանիշներով. «Նոյ զագռաւն արձակեաց: Եւ նա գնացեալ ոչ եկն վերստին ի տապան անդր վասն զի ընդ հարաւ գնաց: Եւ լեռն՝ ուր նստաւ և բոյն արար՝ կոչի ցարդ Ագռաւուց քար» (գտնվում է Մասիսից հարավ)[17]: Ինչպես երևում է, ագռավի՝ «վերստին ի տապան անդր» չվերադառնալն առիթ չի դառնում անեծքի կամ պատժի, քանզի այն չի ընկալվում իբրև աստվածային կամքի խախտում: Ավելին, ագռավի անունով է կոչվում այն լեռը, որի վրա նա բույն է հյուսել: Այս ավանդությունը բովանդակությամբ առավել մոտ է բաբելոնյան առասպելին և, մեր կարծիքով, ծագումով ավելի հին է: Մյուս խմբի ավանդություններում ագռավի բացասական գծերը խտացել են: Վերջինս դրանցում հանդես է գալիս ոչ միայն իբրև «հասարակ» կարգազանց, այլև իբրև Նոյի (իմա՛ Աստծո) բացահայտ թշնամի (սատանա): Ագռավը կծում է իրենից հետո արձակված աղավնու լեզուն, որի պատճառով վերջինս միայն «վու՛, վու՛» է անում: Բայց աղավնին գտնում է Նոյին ավետիս տալու հնարը և ծառի մի ճյուղ է տանում՝ ի նշան ջրի ցամաքելու: Այս պատճառով էլ Նոյն անիծում է ագռավին և օրհնում աղավնուն[18]: Աստվածային կամքի խախտման հետևանքով ագռավն իբրև պատիժ ստանում է իր արատները (հավերժ ագահություն, սև գույն):

Բնական օրինակարգի կամ աստվածային կամքի խախտման հետևանքով Աստծո անեծքին արժանացած ագռավի մասին են պատմում նաև առաջին եղբայրասպանությանն առնչվող որոշ առասպելներ: Երբ Կայենն սպանում է Ա-

---

[16] A. R o o t h. The Raven and the Carcass. Helsinki, 1962, p. 96.

[17] *Ավանդապատում, էջ 51:*

[18] *Նույն տեղում, էջ 134:*

բելին, Ադամն սկզբում կարծում է, թե Աբելը քնած է. բայց հասկանալով, որ մեռած է, պատանում է ու թաղում: Աստված, նրան խղճալով, ուղարկում է ագռավին, որ ասի Աբելին՝ «Պատանդ մաշի՛ր, ե՛կ»: Ագռավը, փոխանակ այդպես ասելու, ասում է՝ «Տապանդ մաշի՛ր, ե՛կ»: Աստված անիծում է ագռավին. «Բերանդ դրած յոթ պատառից մեկը միայն կուլ գնա»[19]: Արդյունքում աստվածային պատգամախոսի, լրաբերի՝ իրեն վստահած դերը չկատարելու հետևանքով ագռավն այս դեպքում էլ պատժվում է հավերժ ագահությամբ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ սույն առասպելի մի այլ տարբերակում գլխավոր հերոսը ագռավի փոխարեն օձն է, որը աստվածային կամքի խախտման հետևանքով կորցնում է նախկինում ունեցած թևերը և սողուն է դառնում: Այս առասպելներն ուշագրավ են նրանով, որ նրանցում օձն ու ագռավը ոչ թե հակադրվում են՝ իբրև երկիրը և երկինքը մարմնավորող հակոտնյա արարածներ (հիշենք Ագռավախաչի, Ագռավավանքի և այլ ավանդություններ), այլ, ընդհակառակը, զուգամիտվում են՝ իբրև իրենց պարտականությունների մեջ թերացած լրաբեր-միջնորդներ:

Առաջին եղբայրասպանությանն առնչվող հաջորդ առասպելում առավել խտանում են ագռավի դիվային գծերը, և նա ներկայանում է ոչ թե իբրև Աստծո ապիկար միջնորդ, այլ՝ հենց սատանայի միջնորդ ու դիվային օգնական: Կայենը Աբելին տանում է դաշտ, որ սպանի, բայց չի իմանում՝ ինչով կտրի նրա գլուխը: Սատանան սև ագռավի տեսքով ներկայանում է Կայենին և ցույց է տալիս սատանի եղունգ կոչված կայծքարը (օբսիդիան), որով Կայենը մորթում է Աբելին: Այս առասպելի մեկ այլ տարբերակում սատանան ագռավի կերպարանքով կռվում է մեկ ուրիշ ագռավի հետ և նույն կայծքարով կտրում է դրա վիզը, որից Կայենն օրինակ է վերցնում: Առասպելը նաև սնոտիապաշտ սովորույթ է ծնել. Բաղեշի գյուղացիները օբսիդիան տեսնելիս այն կոտրում են[20]: Այս առասպելն ուշագրավ է նախ նրանով, որ այստեղ, հավանաբար, պահպանված է վաղեմի հիշողությունը քարեդարյան շրջանից, երբ օբսիդիանը գործածվել է իբրև գործիք և զենքի տարր: Օբսիդիանի ու ագռավի կապը առասպելում պատահական չէ և պայմանավորված է քարի սև գույնով: Այս դեպքում ևս ագռավը՝ իբրև սատանայի կերպարանափոխումներից մեկը, նմանվում է օձին: Հիշենք արգելված պտուղի մասին աստվածաշնչյան հայտնի պատմությունը, որտեղ սատանան օձի կերպարանքով գայթակղում է Եվային:

Փաստորեն, վերոհիշյալ երկու առասպելներում ագռավն ու օձը հանդես են եկել որպես միջնորդներ սատանայի և մարդկանց միջև (Կայեն, Եվա)՝ նրանց մղելով կարգազանց արարքների, աստվածային օրինակարգի խախտման (արգելված պտուղի ճաշակում, եղբայրասպանություն):

Այսպիսով, ագռավի և օձի կողմից աստվածային կամքի խախտումն արտահայտվում է տարբեր ձևերով: Մի դեպքում նրանք Աստծո (կամ սրբագործված անձի) կողմից վստահված, բայց իրենց պարտականությունների մեջ ինչ-ինչ պատճառներով թերացած միջնորդ-լրաբերներ են, մեկ այլ դեպքում միջնորդ-

---

[19] *Նույն տեղում, էջ 141:*

[20] *Նույն տեղում, էջ 337–338:*

ներ են մարդկանց և սատանայի միջև: Վերջին առասպելում առավել խտացած են ագռավի՝ իբրև չարը մարմնավորող թռչունի դիվային գծերը: Երկու դեպքում էլ օձի ու ագռավի գործառույթները նույնական են և էական տարբերություններ չունեն:

Կերպարանափոխումների խմբին պատկանող որոշ առասպելներում ագռավի կերպարանք է ստանում ոչ միայն սատանան, այլև չարը, դիվայինը մարմնավորող այլ էակներ: Այսպես, Անգղա վանքի առասպելում Թադևոս առաքյալի կառուցած տաճարը քանդել փորձող դևերը Աստվածածնի հրաշագործ զորությամբ ագռավներ են դառնում, որոնց անգղերի կերպարանք ստացած հրեշտակները նետում են Սաչան գետը[21]: Մեկ այլ առասպելում ոսկու փայլից շլացած չարսիրտ պառավը քրոջ՝ իր խնամքին հանձնված որբ աղջկան կենդանի թաղել է տալիս բերդի պատերի մեջ և դժբախտ որբի անեծքով ագռավ է դառնում[22]:

Եթե վերևում հիշատակված մի խումբ առասպելներում ագռավն իբրև պատիժ ստանում է իր այս կամ այն արատը, տհաճ հատկանիշը (սև գույն, անկշտություն), ապա վերջին երկու առասպելում ագռավի փոխակերպվելն ինքնին պատիժ է դիտվում, որը կրում են չարը մարմնավորող դիվային կերպարները (դևեր, չարսիրտ պառավ): Հակառակ բևեռում Աստված է կամ վերջինիս իրավասություններով օժտված մեկը (Աստվածածին, հուսահատ որբ, որի անեծքը ներգործուն ուժ ունի՝ որպես անմեղ զոհի վերջին ցանկություն): Երկու դեպքում էլ ագռավը մարմնավորել է չարը, դիվայինն ու դժոխայինը: Այսպիսի ընկալմամբ ագռավը կապվում է ստորերկրյայքի հետ: Առասպելաբանական այս ընկալմանը նպաստել են ոչ միայն ագռավի արտաքին սարսռազդու տեսքը, այլև նրա գիշակերությունը, դիակներով սնվելու սովորույթը: Հիշենք հայտնի ասացվածքը՝ «Ագռավը լեշի վրա կերթա»[23]: Նման կենսակերպը ագռավի կերպարը կապում է գետնի, ստորերկրյայքի հետ: Էնի-Ստրոսի բնորոշմամբ՝ ագռավի՝ դիակներով սնվելու հատկանիշը նպաստել է նրան՝ իբրև կյանքի և մահվան միջնորդ, ընկալելուն[24]:

Հայ ժողովրդական հանելուկներից մեկում ագռավը մարմնավորել է հանգուցյալին (ստորերկրյայք), իսկ նրա ձագերը՝ հուղարկաթափոր (ողջ մնացածներ, երկիր).

Ագռավը քինըմ ա լխլխալիս,
Ճտերը հետան ծվծվալիս[25]:

Սերտորեն առնչվելով ստորերկրյայքին՝ մեռյալների թագավորությանը՝ այս թռչունը հանդես է գալիս իբրև մահվան բոթաբեր: Նրա երևալը, հատկապես

---

[21] *Նույն տեղում, էջ 247:*
[22] *Նույն տեղում, էջ 210:*
[23] *Առածանի, էջ 152:*
[24] Мифы народов мира. Т. I, М., 1980, с. 245.
[25] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965:*

չարագուշակ, ողբային կոնչոցը ժողովրդական հավատալիքներում ընկալվում է իբրև մոտալուտ դժբախտության, փորձանքի կանխանշան: Տարածված է այն սնահավատությունը, թե ում գլխավերևում կոնչաց ագռավը, նրան որևէ փորձանք կամ դժբախտություն կպատահի:

Հայ ժողովրդական զինվորի երգերից մեկում մահվան կանխազգացմամբ համակված վիրավոր երիտասարդը օգնություն է խնդրում.

Հասի՛ր, մերի՛կ, կը մեռնիմ ես,
Սև ագռավներ կըռռան վըրես[26]:

Շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մեջ տարածված է այն հավատալիքը, որի համաձայն՝ ցանքի ժամանակ ագռավի հայտնվելը խանգարում է բերքատվությանը: «Ագռավի տեսած սերմը չի կանաչի», «Կռկան տեսած սերմը չի բուսնիր» ասացվածքները այդ մասին են վկայում: Նման համոզմունքի ձևավորմանը, մեր կարծիքով, նպաստել է ոչ միայն այն հանգամանքը, որ ագռավների երամները կարող են արագությամբ ոչնչացնել ցանած սերմերը, այլև այս թռչունի՝ մահվան խորհրդանիշ համարվելը: Կյանքի, զարթոնքի ցանկացած դրսևորման հակառակորդն է ագռավը, ուստի և ձմռան բոթաբերն է նաև: Ավելին, նրա կոնչոցը համարվում է ձմեռն ու սառնամանիքները հետ վերադարձնող հմայական ներգործուն ձայն: Ժողովրդի համոզմամբ՝ «Աստված որ ագռավի ձենը լսի, Վարդևորին էլ ձին կդնի», «Ագռավի ոեխովն ինի, ամեն օր ձին կգա», «Ագռավի բերանով գարուն չի գա»[27]: Այս հավատալիքներում, հավանաբար, գործուն դեր է ունեցել ագռավի՝ ոչ չվող, ձմեռող թռչուն լինելու առանձնահատկությունը:

Ագռավին բնորոշ հատկանիշներից մեկը, որ պատճառ է դարձել նրա բացասական կերպարի ձևավորմանը, ինչպես արդեն նշվեց, նաև, նրա անմաքուր կենսակերպն է, աղբանոցներում կեր հայթայթելը: Ժողովրդական բանահյուսության մեջ ագռավը դարձել է անմաքուր կենսաձև նախընտրող, հիգիենայի կանոններն անտեսող մարդու այլաբանական կերպար («Ագռավի հետ հընգերացար, թառդ թրքանոցումն ա»[28], «Ագռավին ընկեր եղողը աղբի կհանդիպի»)[29]:

Իր և հատկապես իր ձագերի տհաճ արտաքինով ագռավը ժողովրդական բանահյուսության մեջ նաև տգեղության խորհրդանիշ է («Ես ագռավին հավանեցի, ագռավն ինձ չհավանեց», «Ագռավին հարցրին՝ ղշերին միջին ո՞րն ա սիրուն, ասաց՝ իմ ճուտս», «Ագռավն ուզեց սինամ հավքի պես քելեր, համ զուր մոռցավ, համ զընդրան», «Ագռավն ասեց իր ճուտին՝ մեռնիմ քո սիպտակ տոտին»):

Եթե այս ամենին ավելացնենք զոհի աչքերը հանելու սարսռազդու սովորությունը («Ղռղան ղռղայի աչքը չի հանի», «Լեզուն չըլնի, ագռավները աչքերը

---

[26] *Ա. Ղ ա զ ի յ ա ն. Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Երևան, 1975, էջ 125:*
[27] *Նույն տեղում, էջ 160:*
[28] *Նույն տեղում, էջ 172:*
[29] *Նույն տեղում, էջ 235:*

կը հանեն»), ապա, կարծում ենք, միանգամայն ընդունելի կլինի այն վախը, որ պաշարել ու պաշարում է մարդուն ագռավ տեսնելիս կամ նրա «չարագուշակ» ձայնը լսելիս («Ագռավի ահու մարդ իշին չի կանա չոշ անի»):

Այսպիսով, հայ առասպելաբանական համակարգում թռչուններից թերևս ամենից երկվականն ու հակասականն է ագռավի կերպարը, որն իր կենսաբանական առանձնահատկությունների շնորհիվ առնչվում է աշխարհընկալման տարբեր տարրերի հետ: Ինչպես ցանկացած թռչուն, ագռավն առաջին հերթին զուգադրվում է երկնքի հետ և որպես այդպիսին՝ հաճախ հանդես է գալիս իբրև մարդկության անձնազոհ բարեգործ: Իբրև սև գույնի թռչուն՝ ագռավը կրակաբեր է, կրակապաշտության անբաժան միավորներից մեկը: Իբրև տհաճ ձայն ունեցող գիշակեր թռչուն՝ այն դիվային է և առնչվում է ստորերկրյայքին: Մնունդ հայթայթելիս հողը փորելու սովորությամբ նրան կապում է երկրին, գետնին: Երկինք, երկիր, ստորերկրյայք. այս երեք ոլորտների հետ ունեցած աղերսների շնորհիվ ագռավը ձեռք է բերել միջնորդի դեր՝ վերևի ու ներքևի միջև, նաև Աստծու կամ սատանայի պատգամախոսի գործառույթներ: Որպես ձմեռող թռչուն՝ նա միջնորդ է գարնան և ձմռան, հետևաբար նաև կյանքի ու մահվան միջև: Իբրև ջրհեղեղյան առասպելին սերտորեն առնչվող թռչուն՝ այն նաև միջնորդ է ջրի ու ցամաքի միջև, ինչը վերջին հաշվով խորհրդանշում է Քաոսն ու Տիեզերքը: Լայն է ագռավի գործառույթների շրջանակը ոչ միայն առասպելաբանական համակարգում: Բանահյուսական տարբեր ժանրերում ագռավը հանդես է գալիս իբրև այլաբանական խորհրդանիշ- կերպար՝ մարմնավորելով չարությունն ու տգեղությունը, անմաքուր կենսակերպն ու դիվայնությունը:

ВОРОН В АРМЯНСКИХ ПРЕДАНИЎЯХ

АРАКСЯ ПОГОСЯН

Р е з ю м е

Образ ворона в армянской мифологии, пожалуй, самый противоречивый из птичьих образов. Как любая птица, ворон ассоциируется с небом и часто фигурирует в роли самоотверженного благодетеля. Как птица черного цвета, ворон выступает в роли мифологического героя-демиурга, который добывает огонь для человечества. Привычка копаться в почве при добывании пищи связывает его с землей. Как черная птица с хриплым голосом, он дьяволичен и относится к подземному миру. Сочетаясь с тремя сферами (небо, земля, подземелье), ворон приобретает роль медиатора между верхом и низом, Богом и дьяволом. Как неперелетная птица, он выступает в роли медиатора между весной и зимой, т. е. жизнью и смертью. А как птица, тесно связанная с мифом о потопе, ворон является медиатором между водой и сушью, т. е. хаосом и космосом.